

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ««ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱԴԵՏՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-133-08.05.2019,17.06.2019-ՊԻ-017/1) ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ				

Կառավարություն	5-րդ հոդված	<p>Գտնում ենք, որ նույն մոտեցումն անհրաժեշտ է կիրառել սահմանված ժամկետում ոչ միայն ընդդիմադիր խմբակցության կողմից թեկնածու չառաջադրելու դեպքերի համար, այլև այն դեպքերի, երբ սահմանված ժամկետում թեկնածու չեն առաջադրում այդ իրավասությունն ունեցող մյուս մարմինները՝ այդ դեպքում ևս թեկնածու առաջադրելու իրավունքը համապատասխանաբար փոխանցելով հերթական հաջորդ մարմնին: Նշված առաջարկությունը վերաբերում է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով նախատեսվող նույնաբովանդակ կարգավորումներին:</p>	<p>Չի ընդունվել, քանի որ նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորման համաձայն՝ Կառավարությանը կամ Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը վերապահված Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չառաջադրելու դեպքում՝ նույն մարմինը պահպանում է այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը (թեկնածու առաջադրելու համար լրացուցիչ հատկացվում է մեկամսյա ժամկետ):</p>	Չի ընդունվել:
«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	5-րդ հոդված	<p>Հոդվածում և նախագծերի փաթեթի՝ դրանցից բխող հոդվածներում կատարել փոփոխություն և նախատեսել, որ ինքնավար մարմինների (այդ թվում՝</p>	Չի ընդունվել:	Առաջարկը հանվել է:

		հանրային ծառայությունները կարգավորող և տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովների) անդամներին (այդ թվում՝ նախագահին) հաջորդաբար առաջադրում են Ազգային ժողովի իշխող և ընդդիմադիր խմբակցությունները: Ընդ որում՝ իշխանական և ընդդիմադիր խմբակցություններից յուրաքանչյուրն առաջադրում է մեկական թեկնածու:		
Կառավարություն, Հեղինակ	Նախագիծ	Ինքնավար մարմնի անդամի լիազորությունները դադարեցվում են ինքնավար մարմնի եզրակացության հիման վրա:	Ընդունվել է: Նախագծում և հարակից օրենքների նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ				
Կառավարություն	-	Առաջարկում ենք նախատեսել այնպիսի կարգավորում, որից կբխի, որ թեկնածու առաջադրելու իրավունքը, ըստ սահմանված հաջորդականության, կարող է անցնել այդ իրավունքն ունեցող հաջորդ մարմնին միայն այն դեպքում, երբ նախորդ մարմնի կողմից առաջադրած որևէ թեկնածու կըստնրվի Ազգային ժողովի կողմից:	Ընդունվել է այլ խմբագրությամբ, սահմանվել է, որ առաջադրված թեկնածուի չընտրվելու դեպքում՝ համապատասխան թափուր պաշտոնում	Ընդունվել է՝ համապատասխան խմբագրությամբ:

			նույն մարմնի կողմից թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է:	
Կառավարություն	1-ին հոդվածի 4-րդ մաս	Առաջարկում ենք «առնվազն երեք տարին» բառերից հետո լրացնել «ամբողջական կամ հանրագումարային» բառերը՝ հաշվի առնելով այն, որ հնարավոր է իրավիճակ, երբ, օրինակ՝ անձը ունենա ինչպես ղեկավարի, այնպես էլ տեղակալի և համակարգողի աշխատանքային ստաժ, ուստի այդ ստաժերի հանրագումարի արդյունքում է միայն ձևավորվում 3 տարվա ղեկավար պաշտոնների ստաժը: Նույն առաջարկը վերաբերում է նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 5-րդ մասով նախատեսվող նույնաբովանդակ կարգավորմանը:	Ընդունվել է այլ խմբագրությամբ (տես՝ ստորև):	Ընդունվել է համապատասխան խմբագրությամբ:
Կառավարություն, Հեղինակ	1-ին հոդվածի 4-րդ մաս	Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, ով ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման,	Ընդունվել է: Համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև մյուս նախագծերում:	Ընդունվել է:

		համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից):		
Կառավարություն	1-ին հոդված (նոր մաս)	Հոդվածը լրացնել 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «5) 6-րդ մասը 1-ին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Այն դեպքում, երբ հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնն առաջացել է այդ պաշտոնը զբաղեցրած անդամի՝ հանձնաժողովի նախագահ նշանակվելու արդյունքում, ապա այդ թափուր պաշտոնում հանձնաժողովի նոր անդամը նշանակվում է հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածով:»:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
Կառավարություն	4-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկում ենք Հանձնաժողովի որոշումների հրապարակման հետևյալ իրավակարգավորումը՝ «Հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում Հանձնաժողովի որոշմամբ սահմանված կարգով հրապարակում է իր ընդունած որոշումները՝ չներառելով օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները:»	Ընդունվել է այլ խմբագրությամբ (հրապարակման ոչ ենթակա տեղեկությունների փոխարեն սահմանվել է «պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող»): Նույն կարգավորումը սահմանվել է «Ազգային	Ընդունվել է համապատասխան խմբագրությամբ:

			<p>ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում՝ Ազգային ժողովի նախագահի որոշումների և կարգադրությունների, ինչպես նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքներում՝ համապատասխան հանձնաժողովների որոշումների համար:</p>	
<p>«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ</p>				
Կառավարություն	1-ին հոդվածի 1-ին մաս	Նշված փոփոխության փոխարեն առաջարկում ենք ՀՕ-249-Ն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասում «սույն օրենքով» բառերը փոխարինել ««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով» բառերով՝ հաշվի առնելով այն, որ նշյալ փոփոխությունը վերաբերում է բացառապես ՀՕ-249-Ն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված	Չի ընդունվել, քանի որ նախագծով, ըստ էության, առաջարկվում է նույն սահմանումը:	Չի ընդունվել:

		Հանձնաժողովի անդամների նշանակման կարգի իրավական հիմքին:		
«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի				
Կառավարություն	1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 2-րդ մասում չնախատեսել Հանձնաժողովի առաջին կազմի վերաբերյալ բացառություն՝ նշված մասից հանելով «հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման, ինչպես նաև» բառերը: Նույն առաջարկությունը վերաբերում է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսվող նույնաբովանդակ կարգավորմանը:	Չի ընդունվել, քանի որ նշված բացառությունը սահմանվում է տարընթերցումներ չառաջացնելու նպատակով:	Չի ընդունվել:
Կառավարություն	4-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասով փոփոխվող՝ Օրենքի 11-րդ հոդվածի 11-րդ մասում «ընդունած» բառը փոխարինել «ընդունած՝ կարգավորվող անձանց և սպառողներին վերաբերող» բառերով:	Չի ընդունվել, քանի որ նախագծով առաջարկվող կարգավորմամբ՝ հանձնաժողովի այն ակտերը, որոնք պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք են	Չի ընդունվել:

			պարունակում, չեն կարող հրապարակվել:	
Կառավարություն	7-րդ հոդվածի 6-րդ մաս	Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը 1-ին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Այն դեպքում, երբ հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնն առաջացել է այդ պաշտոնը զբաղեցրած անդամի՝ հանձնաժողովի նախագահ նշանակվելու արդյունքում, ապա այդ թափուր պաշտոնում հանձնաժողովի նոր անդամը նշանակվում է հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածով:»:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ				
«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Նախագիծ	Առաջարկում ենք Նախագծերի փաթեթից հանել Պ-133 ⁵ նախագիծը, այսինքն՝ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում չկատարել Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխությունները:	Չի ընդունվել:	Առաջարկը հանվել է:
«Լուսավոր Հայաստան» խմբակցություն		Հիմնավորման չի ենթարկվում նաև հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի ստաժը 10 տարուց մինչև 5 տարի կրճատելու առաջարկը (Պ-1333 նախագծի 1-ին հոդված), որը ևս առաջարկում ենք հանել փաթեթից՝ թողնելով ներկայումս գործող 10 տարվա ստաժի պահանջը:	Չի ընդունվել:	Առաջարկը հանվել է:

Կառավարություն, Հեղինակ	1-ին հոդված և դրան առնչվող մյուս հոդվածներում	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահին ընտրում է հանձնաժողովը՝ հանձնաժողովի անդամի լիազրությունների ժամկետով:	Ընդունվել է: Կատարվել են դրան առնչվող այլ փոփոխություններ:	Ընդունվել է:
Կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասեր	«հանել» բառը փոխարինել «ուժը կորցրած ճանաչել» բառերով	Չի ընդունվել, քանի որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այդ օրենքի 18-րդ հոդվածը դեռևս ուժի մեջ չի մտել և հետևաբար՝ չի կարող ուժը կորցրած ճանաչվել:	Չի ընդունվել:
Կառավարություն	6-րդ և 7-րդ հոդվածներ	Առաջարկում ենք հոդվածներով համապատասխանաբար լրացվող 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից և 24-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետից հանել «իր կողմից մշակված» բառակապակցությունը:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
Կառավարություն	6-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծով սահմանել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության, կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության վերաբերյալ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		ուսումնասիրությունների իրականացման և դրանց արդյունքներով խորհրդատվական բնույթի եզրակացությունների ներկայացման կարգը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:		
Կառավարություն, Հեղինակ	9-րդ հոդվածի	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջին կազմի երկու անդամ նշանակվում են 6-ական տարի (Կառավարության և Ազգային ժողովի կառավարող խմբակցության առաջադրմամբ), երկու անդամ՝ 4-ական տարի (Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների առաջադրմամբ), մեկ անդամ՝ 3 տարի (Բարձրագույն դատական խորհրդի առաջադրմամբ) պաշտոնվարման ժամկետով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
Հեղինակ	9-րդ հոդված	Համապատասխան խմբագրությամբ՝ սահմանել անցումային դրույթները:	+	Ընդունվել է:
«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ				
Կառավարություն	1-ին հոդված	«ինքնավար պետական մարմնի նախագահ» և «ինքնավար պետական մարմնի անդամ» բառերը համապատասխանաբար, փոխարինել «ինքնավար մարմնի նախագահ» և «ինքնավար մարմնի նախագահ» բառերով՝ նկատի ունենալով Սահմանադրության 122-րդ հոդվածի իրավակարգավորումները	Ընդունվել է այլ խմբագրությամբ:	Ընդունվել է համապատասխան խմբագրությամբ: